ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի
Ավագանու 08.10.2024թ.
թիվ 73-Լ որոշմամբ

ԿԱՐԳ ԵՎ ՁԵՎ
«ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԵԴԱԼ»-Ի ՇՆՈՐՀՄԱՆ

«Համայնքի ղեկավարի մեդալ»-ը (այսուհետ՝ մեդալ) շնորհվում է՝ Վաղարշապատ համայնքին բացառիկ ծառայություններ մատուցելու և նրա բարօրությանն ուղղված.

1) համայնքում ծավալած պետական, գիտական, ստեղծագործական, մշակութային և այլ գործունեության համար,

2) ազգային փոքրամասնությունների հետ բարեկամության ու համագործակցության ամրապնդմանը և օտարերկրյա պետությունների հետ փոխշահավետ գործակցության զարգացմանը նպաստելու համար.

3) ի շահ Վաղարշապատ համայնքի և համայնքի բնակիչների իրականացրած բարեգործական գործունեության համար.

4) Վաղարշապատ համայնքի զարգացման գործում մեծ ներդրումների, համայնքի բնակիչների բարեկեցությանը միտված գործունեության համար.

5) Վաղարշապատի համայնքապետարանում երկարատև, նվիրված, անբասիր աշխատանքի և մասնագիտական բարձր որակներ ցուցաբերելու համար:

2. Մեդալը շնորհում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարը (այսուհետ՝ համայնքի ղեկավար):

3. Մեդալն իրենից ներկայացնում է բրոնզե շրջանաձև մեդալ, որի դիմային մասում պատկերված է Վաղարշապատ համայնքի զինանշանը: Մեդալի դարձերեսին պատկերված է Էջմիածնի Սուրբ Հռիփսիմե եկեղեցին, երիզված՝ զարդանախշերով և «St Hripsime Church» գրառումով:

4. Մեդալով պարգևատրելու որոշումը կայացնում է համայնքի ղեկավարը:

5.Մեդալը հանդիսավոր պայմաններում պարգևատրված անձին է հանձնում համայնքի ղեկավարը:

6. Համայնքի ղեկավարի մեդալով կրկնակի պարգևատրում չի կատարվում:

7.Համայնքի ղեկավարի մեդալի հետ տրվում է վկայական:

8.Մեդալի շնորհման արարողակարգային հարցերը վերապահվում են համայնքի ղեկավարի խորհրդականին:

<u>Ձև</u>

Համայնքի ղեկավարի մեդալի